Մրցույթ՝ ՀՀ Երևանի «Ալ. Շիրվանզադեի անվան թիվ 21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. փաստաթուղթ (դիպլոմ՝) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. անձնագրի պատճենը,

4. ինքնակենսագրություն (Ձև 4),

5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021 թվականի մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի մարտի 19–ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան թիվ 21 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան Վաղարշյան փող. 24: Տեղեկությունների համար զանգահարել՝ 010-22-31-10 հեռախոսահամարով: